ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

«30» «հունիսի» 2020թ. № 203-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N 31-Լ ՀՐԱՄԱՆԻ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով և 33-րդ հոդվածով, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 26-րդ կետի 11-րդ ենթակետով.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետության տվյալ բյուջետային տարվա պետական բյուջեով շրջակա միջավայրի նախարարության համար նախատեսված պարգևատրման ֆոնդից աշխատողների պարգևատրման կարգը հաստատելու մասին» N 31-Լ հրամանի հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) հրամանի հավելվածի 4-րդ և 5-րդ կետերից հանել «, գործակալությունների» բառերը:

2) հրամանի հավելվածի 13-րդ կետում «Նախարարության 12-րդ կետում չներառված քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց» բառերը փոխարինել «Նախարարության քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների 4-րդ ենթախմբի և մասնագիտական պաշտոններ զբաղեցնող անձանց» բառերով:

3) հրամանի հավելվածի 14.4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«14.4 Նախարարության Գլխավոր քարտուղարը Նախարարի հետ համաձայնեցված ցուցակները տրամադրում է ֆինանսատնտեսական վարչությանը: Վերջինս մեկ աշխատանքային օրվա ընթացքում ամփոփում է դրանք և նախապատրաստում դրամական պարգևատրում տրամադրելու մասին իրավական ակտերի նախագծերը:»:

ՆԱԽԱՐԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ Վ.ՋԻԼԱՎՅԱՆ

6/30/2020

X

ՎԱՀԵ ՋԻԼԱՎՅԱՆ

Signed by: JILAVYAN VAHE 4101750076

«30» հունիսի 2020թ.
ք.Երևան